



2016թ.հոկտեմբերին Պիլիշչաբայի Պետեր Պագմանի անվան կաթոլիկ համալսարանում հանդիսավորությամբ բացվեց հայագիտական ամբիոն, որի ուսանողները կարող են ուսումնասիրել հայ ժողովրդի պատմություն , հայկական մշակույթ: Համալսարանում ուսուցումը տարվում է անգլերեն լեզվով և հասանելի է օտարալեզու բոլոր ուսանողների համար: Հրավիրված հյուրերի շարքում էին նաև Երևանի պետական մանկավարժական համալսարանի պատվիրակները, ովքեր հոկտեմբերի 20-25-ը մնացին Հունգարիայում և հետաքրքիր հանդիպումներ ունեցան համալսարանի աշխատողների հետ: «Ռիասպորա 21» ամսագրի լրագրողը հարցազրույց է ունեցել հայագիտական ամբիոնի վարիչ Կովաչ Բալինտի հետ, որը մեծ ներդրում է ունեցել ամբիոնի ստեղծման աշխատանքներում:

- Մասնաճյուղի բացումը ուշագրավ և հետաքրքիր իրադարձություն է: Ձեր` ավելի քան տասնամյակ տևած նախապատրաստական աշխատանքներն իրենց արդյունքը տվեցին:Պատմեք, խնդրում եմ, Ձեր ծրագրերի մասին:
- Նախ ես կցանկանայի խոսել նոր բացված ամբիոնի առավելությունների մասին: Մեր համալսարանում, 2002թ-ից սկսած, մենք ուսումնասիրում ենք հայկական մշակույթը: Մենք դասախոսություններ և կոնֆերանսներ ենք կազմակերպել պրոֆեսոր Ռոբե Շանդորի ղեկավարությամբ: Մոտավորապես մեկուկես տարի տևած նախապատրաստական աշխատանքներից հետո այս տարվա մարտին Երևանում տեղի ունեցավ ամբիոնի բացման համաձայնագրի ստորագրությունը: Կաթոլիկ համալսարանի և ԵՊՄՀ-ի միջև համաձայնագիրը ստորագրեցին ռեկտորներ Ռուբեն Կ. Միրզախանյանը և Սուրոմի Սաբուլջ Անգելմը: Այսպիսով` մեկնարկեց հայագիտության ուսուցումը, և գործի դրվեց ուսանողական և ուսուցչական կազմի փոխանակման ծրագիրը: Բայց սա միայն առաջին քայլն էր, որից հետո Կաթոլիկ համալսարանի խորհուրդը հովանավորեց ամբիոնի բացումը և ուսուցման ակրեդիտացիոն գործընթացի ներդրումը: Ներկայիս կարգավիճակի համաձայն դա նշանակում է, որ ուսանողները կարող են անկախ մագիստրոսական կուրսեր և որակավորում ստանալ, և այդ դասընթացներին հիմնականում նրանք կմասնակցեն, ովքեր արդեն ընդունվել են համալսարանի հումանիտար և հասարակական գիտությունների ֆակուլտետ: Եթե ուսանողներից որևէ մեկը մասնակցել է նաև հայագիտության ամբիոնում

կազմակերպված դասընթացներին, դա նույնպես ներառվում է դիպլոմի մեջ:
– Սա համալսարանում լրացուցիչ ուսուցում է, բայց դուք պլանավորում եք այն դարձնել անկախ մասնաձյուղ:



– Հաջորդ քայլը, որ մենք ցանկանում ենք իրականացնել 2017 թվականի սեպտեմբերից, համալսարանում հայագիտության ուսուցման դեպքում անկախ գիտական աստիճան ստանալու ծրագիրն է այդպիսով, հնարավոր կլինի դիմել մեր ամբիոն՝ որպես համալսարանի անկախ մասնաձյուղ:

– Ինչպիսի՞ մասնագիտական, կազմակերպչական և այլ դժվարությունների եք հանդիպել ամբիոնի բացման աշխատանքները կազմակերպելու ժամանակ:

– Առարկաների ուսուցման լեզուն անգլերենն է: Այսինքն «Փիլիսոփայություն», «Հայոց պատմություն», «Արվեստի պատմություն» առարկաների ուսուցումը կատարվում է այդ լեզվով: Ուսանողների ներկայիս քանակը 10-15 է: Պետք է ամեն տարի ամենաքիչը 10 ուսանող ունենա մասնաձյուղը, որպեսզի այն ոչ շահութաբեր չհամարվի: Պարտադիր պայման է նաև ամենաքիչը 3 հոգուց բաղկացած ուսուցչական կազմի առկայությունը: Նրանք Պերմանիայից հայկական ծագումով ուսուցիչներ են: Մասնաձյուղի բացումը միջազգային կարևորություն ունի ոչ միայն այս պատճառով, այլ նաև նրա եզակիության պատճառով, քանի որ նմանատիպ մասնաձյուղեր Արևելյան Եվրոպայում և ամբողջ աշխարհում ընդամենը մի քանիսն են՝ Պերմանիայի, Ֆրանսիայի և Միացյալ Նահանգների համալսարաններում: Բայց աշխարհում տենդենցը ավելի շատ գնում է դեպի նմանատիպ ամբիոնների վերացումը: Մեր ամբիոնի բացումը առաջադիմական և ողջունելի քայլ է:

– Քաղաքական դաշտում արգելքներ չե՞ն եղել:

– Մենք քաղաքական դիմադրության չենք հանդիպել: Հայաստանի Հանրապետությունը մասնավորապես մեծ օգնություն ցուցաբերեց ամբիոնի ստեղծման գործընթացին, և մեր կապերն այնքան ամուր են, որ Սուրոմի Սաբոլչ Անգելմի՝ Պատվավոր Դոկտորի կոչման արարողությանը ներկա էր նաև Հայաստանի կրթության նախարարը:

– Ովքե՞ր են մասնակցելու ուսուցմանը, ո՞րն է թիրախային լսարանը:

– Ուսուցման ծրագիրը ընդունվել է պետության կողմից, այսինքն, եթե հունգար ուսանողները ընդունվել են համալսարան, նրանք կարող են մասնակցել դասընթացին անվճար, բայց այն

ավելի շատ կարող է իսկապես գրավիչ լինել Հայկական Սփյուռքի համար, քանի որ 200 0000-300 0000 ֆորինտ վարձը մեկ կիսամյակի համար շատ ավելի մատչելի է՝ համեմատած Արևմտյան Եվրոպայի երկրների ուսուցման վարձի հետ: Այսպիսով՝ մենք վստահորեն սպասում ենք ուսանողների, բայց, ցավոք, պետք է ասեմ, որ Տրանսիլվանիայի հայ երիտասարդները ամենաքիչն են հետաքրքրված այս ծրագրով:

- Ղուք պլանավորում եք համագործակցել Հունգարիայի հայ ինքնավարության հետ:
- Մենք շատ կցանկանայինք համագործակցել նրա հետ, որովհետև համագործակցությունը կարող է ամբիոնին լրջորեն օգնել շատ ոլորտներում: Նկատի ունեմ, օրինակ, մեր գրադարանի հարստացումը, ուսանողների կրթաթոշակը, ուսանողների ուսման վարձին աջակցությունը, մշակութային ծրագրերի, միջոցառումների համատեղ կազմակերպումը: Արտերկրից եկած ուսանողները ավելի հեշտ կարող են ներգրավվել տեղի հայության մշակութային կյանքին և մասնակցել կազմակերպվող միջոցառումներին: